



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ գլխավոր տնօրենի
«12» դեկտեմբերի 2024 թ. թիվ 439-24Լ հրամանով

«ԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ գույքի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով գույքի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Ապահովագրության օբյեկտ

Բնակարանների կոնստրուկտիվ տարրերը՝ պատերը, մուտքի դուռը, պատուհանների և դռների կոնստրուկցիաները, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման համակարգերի խողովակաշարերը:

Հարդարման տարրերը՝ բոլոր ներքին երեսպատման, ներկարարական, ներքին հարդարման տարրերը, պատերի, հատակների, առաստաղների ծածկույթները, միջսենյակային դռների կառույցները, ներառյալ ապակեպատումը, միջսենյակային պատուհանային կոնստրուկցիաները:

Երրորդ անձանց պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվությունը՝ օրինական հիմքերով կամ Ապահովադրի իմացությամբ (թույլտվությամբ) բնակարանում բնակվող անձանց կողմից բնակելի տարածքի ամենօրյա շահագործման հետևանքով երրորդ անձանց գույքին պատահական և ոչ կանխամտածված հասցված վնասի պատասխանատվությունը:

Ապահովագրական ռիսկեր

- Զրից առաջացած վնաս
- Հրդեհ, պայթյուն
- Կայծակի հարված, կարկուտ
- Գազի պայթյուն
- Տարերային աղետներ, բացառությամբ երկրաշարժի:

Շահառու (հատուցում ստացող անձ)

- Գույքի ապահովագրության մասով գույքի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով գույքի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
- Երրորդ անձանց պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով երրորդ անձինք, որոնց գույքին պատճառվել է վնաս:

Ապահովագրավճար, ապահովագրական գումար

Ապահովագրավճար	Ապահովագրական գումար
25.000 ՀՀ դրամ	5.000.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան 2.500.000 ՀՀ դրամ մեկ ապահովագրական պատահարի գծով
45.000 ՀՀ դրամ	5.000.000 ՀՀ դրամ

Ապահովագրավճարի վճարման կարգ

Միանվագ, ապահովագրական պայմանագրի կնքման պահին:

Ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետ

Ապահովագրական պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով:

Ապահովադրի գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում

- Ապահովագրական ընկերությանը տեղեկացնել ապահովագրական պատահարի մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 ժամվա ընթացքում:
- Գույքի ոչնչացման կամ վնասման պատճառներն ու հանգամանքները պարզելու իրավասություն ունեցող համապատասխան իրավասու մարմիններին հայտնել ապահովագրական պատահարի մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 ժամվա ընթացքում:

Ապահովագրական հատուցում

Ապահովագրական ընկերությունը ապահովագրական պատահարի արդյունքում հատուցումը վճարում (կամ մերժում) է պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրերի ընթացքում:

Լրացուցիչ պայմաններ

- Պայմանագրի գործողության ընթացքում կիրառվում է ոչ պայմանական ֆրանշիզա՝

20 000 ՀՀ դրամի չափով:

- Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահին հաջորդող 5-րդ օրը:
- Մինչ պայմանագրի ուժի մեջ մտնելը բնակարանի լուսանկարները պարտադիր ներկայացվում են Ապահովագրական ընկերությանը:
- Եթե ապահովագրական պայմանագրի կնքման պահին բնակարանը վերանորոգված չէ, ապա Ապահովագրական ընկերությանը ներկայացվում են չվերանորոգված բնակարանի լուսանկարները: Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում, բնակարանի վերանորոգման դեպքում, Ապահովադիրը պարտավոր է վերանորոգված բնակարանի լուսանկարները ներկայացնել Ապահովագրական ընկերությանը, ընդ որում՝ վերոնշյալ հանգամանքներում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վերանորոգված բնակարանի նկարների բացակայությունը հանդիսանում է ապահովագրական հատուցման մերժման կամ մասնակի (մինչև վերանորոգման վիճակը) հատուցման հիմք:
- Ապահովագրության բոլոր այն պայմանները, որոնց առանձնահատկությունները որոշված չեն «Ապահով բնակարան» ապահովագրության ծրագրով, որոշվում են «Գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոններով»: